ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2018 թվականի N 50-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԵԿԱՏՄԱՄԲ ՌԱԶՄԻԿ ՔԱՋԻԿԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Քաջիկի Ենգիբարյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզագրման արդյունքում Ռազմիկ Քաջիկի Ենգիբարյանի կողմից փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ <<ՀՀ հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Ռազմիկ Քաջիկի Ենգիբարյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0038-0012 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.1102 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասի սահմանները որոշվում են <<ԱՐՏԻԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Լեռնանիստ համայնքի բնակիչ Ռազմիկ Քաջիկի Ենգիբարյանին պատկանող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 3-րդ փողոց թիվ 22:

4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը գրանցել Լեռնանիստ համայնքի բնակիչ Ռազմիկ Քաջիկի Ենգիբարյանի սեփականության իրավունքն ամրագրված հողամասի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018թ. մայիսի 17
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 51-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՐՏԱԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեի 09.2.1.51 /հիմնական ընդհանուր կրթություն/ ծրագիր 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից Լեռնանիստի Ս.Նազարյանի անվան միջնակարգ դպրոցի թվով մեկ 12-րդ դասարանի շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ տալ դրամական օգնություն 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ, ընդամենը 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018թ. մայիսի 17
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 52-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՒՎՆԵՐՈՒՄ ՎԻՐԱՎՈՐ ԵՎ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ և 48-րդ հոդվածի 1-ին մասի 3 -րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 19-ի N27-Ա որոշումը և Լեռնանիստ համայնքի դրամական օգնություն տրամադրող հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 16-ի թիվ 4 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մայիսյան հերոսամարտերի 100-ամյա հոբելյանին նվիրված, Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի Հայրենական Մեծ Պատերազմի, Ղարաբաղյան կռիվներում վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն համաձայն N 1 հավելվածի:

2. Ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն , համաձայն N 2 հավելվածի

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018թ. մայիսի 17
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 53-Ա

ԱԻԴԱ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԻՐ ԹՈՌՆԻԿ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի 4-րդ գլխի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով և 37-րդ հոդվածի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 16-ի թիվ 2 արձանագրությանը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Լեռնանիստ համայնքի 2-րդ թաղ 8 տան բնակչուհի՝ Աիդա Համազասպի Սահակյանին ճանաչել իր թոռնիկ՝ Հովհաննես Խաչատուրի Սարուխանյանի /ծնված 2011 թվականի հոկտեմբերի 31-ին/ նկատմամբ խնամակալ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թ. մայիսի 17
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 54-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 50-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝
1) 08.2.4.51/ այլ մշակութային կազմակերպություն/ ծրագրի 4239/ ընդհանուր բնույթի ծառայություններ / հոդվածի <<950.0>> թիվը փոխարինել <<895.0>> թվով:
2) 08.2.4.51/ այլ մշակութային կազմակերպություն/ ծրագրի 4216/ տրանսպորտի վարձակալություն / հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<55.0>> թվով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018թ. մայիսի 17
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 55-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով , 38 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համայնքի 2018 թվականի բյուջեի 09.4.1/ բարձրագույն կրթություն/ ծրագիր 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից Լեռնանիստ համայնքի ուսանողներին ուսումնական տարվա ավարտի կապակցությամբ տալ դրամական օգնություն՝ 100.000 /մեկ հարյուր հազար / դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թ. մայիսի 22
գ.Լեռնանիստ